

րագ (4 անգամ աւելի Պրանսայէն), և որը մէկ միլիոն հաւկիթ:

Այս անհաւատալի արդիւնքը պէտք է վերագրել այն գիտական մեթոտներուն կիրառութեան որոնցմով կը շահագործեն երկիրը, և նաև գործակցական միութիւններու ծաւալումին՝ որոնք անհունապէս կը նպաստեն երկրի մը առաջին հարստութիւնը կազմող երկրագործութեան և տընտեսագիտութեան: Առաջին գործակցական (cooperatif) կաթնարանը 1882ին հիմնուեցաւ և այժմ 1000էն աւելի եղած են՝ որոնք 900 հազար կովերէ կը կթեն, այսինքն երկրին հարիւրին 80 կովը կը կթեն՝ ու կարագ, պանիր, և այլն կը պատրաստեն, և կ'արտածեն:

ՄԵՐ ՄԱՐԿԵՐՈՒ ՌԵՂԵԴՆԵՐԸ

Միշտ հետաքրքրական եղած է գիտնալ թէ մեծ մարդերու ուղեղները ինչպէս կազմուած են և ինչ բանի մէջ կը տարբերին սովորական մարդերէն:

Արդի քննադատական մարդաբանութիւնը կը հաւատայ որ մեծութիւնը, ձեւը, գանկի ծաւալը՝ ըղեղային պաշտամունքի (fonction) վրայ ոչ մի ազդեցութիւն չունին: Եւ յիշատի փոքր գլխով հանձարներ կան և ընդհակառակն մեծ գլխով ալ անընդունակ անձնաւորութիւններ: Նաև ուղեղի ծանրութիւնը՝ իրական կարեւորութիւն մը չունի մտաւորական գործունէութեան նկատմամբ:

Միայն հաստատուած կը թուի՝ որ ուղեղի ձեւը, ալեծն դարձուածքներու շարք, թիւր և ակունքերու խորութիւնը անչուութիւն ունին իմացականութեան պաշտօնավարութեանց հետ: Բոլոր ուսումնասիրողներն՝ իմացականութիւնը և մանաւանդ գաղափարներու համախմբութեան կարողութիւնը ուղեղային կեղեկին վրայ կը դնեն: Կարեւորութիւն կը տրուի նաև «համախմբութիւն գունդերու» ըսուած մասերու արտաքին կարգի զարգացմանը:

Մոմէնի ուղեղը՝ բաղդատմամբ ուրիշներու հետ՝ թեթև էր և քիչ խոր աւօ-

սաւորութիւններ ունէր, բայց մեծ զարգացումն կը ներկայացնէր՝ մասնաւորապէս ճակատային և յետակողմային համախմբութեանց գունդերուն վրայ:

Պոնսէնի ուղեղի մէջ ձախակողմեան ճակտի բլթակը սաստիկ խոշոր էր:

Սաուերվայն, որ արտաքին կարգի փիլիսոփայ մ'էր և լեզուագէտ և որ կը խօսէր ու կը գրէր 54 լեզուներ՝ ուղեղի մէջ արտաքին կարգի բան մը չէր ցուցնէր. նոյն իսկ խօսակցութեան կեղոնք ըսուած ուղեղի մասը սովորական մարդերու ունեցածէն չէր տարբերուի:

Այժմ կարծես հաստատուած է որ իմացականութեան և մտածմունքի ընդունակութեան տեղը բովանդակ ուղեղի մակերևոյթին է: Շատ տարակուսական է այս ինչ ու այն ինչ յատկութեան առաքինութեան կամ մոլութեան վերաբերող մասնաւոր ուղեղային կեղոնքներու գոյութիւնը, ինչպէս նաև դրական չենք կարող համարիլ թէ հանձարաւոր մարդերու ուղեղները զարուակցութիւններ ունենան հասարակ մարդերու ունեցածէն: Երեւի անձնատուութեանց զանկերու վրայ եղած մանրակրկիտ խուզարկութիւնները մինչև ցարդ համոզիչ արդիւնք մը չեն տուած՝ «Հանձարեղ» ուղեղը բնորոշելու համար:

ՖԻԶԻՔԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Մարդու երջանկութեան հիմնական առհասարակայն առողջութեան մէջ կը կայանայ: Ո՛վ որ առողջ է՝ ուղղամտութեամբ կը գործէ: Լաւատես կ'ըլլայ, կը զգայ որ կեանքը երկնատուր բարեք մ'է և կը խառնովանի թէ ապրիլը հեշտանք մ'է:

Վատառողջը ասոնց հակառակը կը վկայէ. իր կեանքը իրեն համար տանջանք մը կը թուի, նա գրեթէ միշտ յոռետես է ու սգոգ՝ զգացումներով համակուած կ'ըլլայ: Եթէ որոնենք՝ պիտի տեսնենք որ՝ տանին ինք մարդու տխուր մտածումներու և ապերջանիկ կեանքին պատճառը գէշ մարտողութեան մէջ կը կայանայ: